ԹԵՄԱ 1

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1.8 Աշխարհագրական քարտեզների դասակարգումը

1. Քարտեզն իրականության մոդելն է, արտացոլումը: Այն ցույց է տալիս տարատեսակ բնական և սոցիալ-տնտեսական օբյեկտների և երևույթների տեղաբաշխումը, հատկանիշները և կապերը: Քարտեզի վրա անհնար է աշխարհագրական օբյեկտները և երևույթները պատկերել իրենց բնական մեծություններով, մակերեսներով, ներքին կառուցվածքով և այլն: Ուստի անհրաժեշտ է դրանք փոքրացնել, փոխարինել տարբեր չափերով, գույների, ձևերի, մեծությունների պատկերներով:

2.

Հարավարևմտյան Ասիա (տարածաշրջանի քարտեզ)

3. **Թեմատիկ են** անվանում այն քարտեզները, որոնցում մանրամասն տրվում է որևէ կոնկրետ բնական կամ հասարակական աշխարհագրական

թեմա՝ տեկտոնական, հողային, բուսական, կլիմայական, բնական զոնաների, քաղաքական, բնակչության խտության, բնակչության կազմի (էթնիկական, ռասայական, կրոնական), տնտեսության առանձին ճյուղերի, ենթաճյուղերի և այլ քարտեզներ: Կան նաև համալիր (կոմպլեքսային) քարտեզներ, որոնցով ներկայացնում են հարակից թեմաներ, օրինակ՝ հողաբուսական ծածկը և այլն:

4. Պայմանական նշաններ: Պայմանական նշանների ստեղծման համար կիրառում են գծապատկերային ու գունային միջոցների մի ամբողջական համակարգ՝ նշանների ձևը, գույնը, չափերը, կողմնորոշումը, ներքին կառուցվածքը: Տարբեր գծապատկերային միջոցների զուգորդման շնորհիվ հնարավոր է գործնականում ստանալ նշանների անսահման մեծ բազմազանություն: Ներկայումս մի շարք քարտեզներում կիրառվում են պայմանական նշանների ստանդարտ համակարգեր: Այդպիսին են տեղագրական, սինօպտիկ (եղանակացույց), երկրաբանական քարտեզները: Թեմատիկ շատ քարտեզների համար պայմանական նշանների ստանդարտացված համակարգեր չկան:

Հարկ է նշել, որ շատ գիտություններ ունեն իրենց ուրույն լեզուն, որը հնարավորություն է տալիս իրար հասկանալու դրանցով զբաղվող, բայց տարբեր լեզուներով խոսող մասնագետներին: Քիմիա առարկան ուսումնասիրելիս հարկավոր է ծանոթանալ դրա լեզվին՝ քիմիական տարրերի նշաններ, քիմիական ռեակցիաների (հակազդեցությունների) բանաձևերի գրելաձև: Մաթեմատիկան սկսվում է թվերի և մաթեմատիկական խորհրդանիշերի ու հավասարումների ուսումնասիրությունից: Այն մշակել է գերմանացի մաթեմատիկոս Լայբնիցը: Յուրաքանչյուր լեզու միջոց է, որի օգնությամբ մարդիկ արտահայտում են իրենց պատկերացումները շրջապատող աշխարհի վերաբերյալ: Դրանք ժամանակի ընթացքում զարգանում ու կատարելագործվում են և դառնում հասկանալի ու հարմար բոլորի համար: Այդպես էլ աշխարհագրությունը, որի ուրույն լեզվի՝ աշխարհագրական քարտեզի շնորհիվ կարելի է հեշտ և ճշգրիտ պատկերել տարածությունը, օբյեկտների ձևն ու փոխադարձ դիրքը և դառնալ տեղեկատվության հզոր աղբյուր:

5. Պայմանական նշանները ցույց են տալիս ոչ միայն օբյեկտների տեղադիրքը, այլև դրանց քանակական և որակական բնութագրերը և ներքին կառուցվածքը՝ արտահայտված տարբեր ձևի ու չափի նշաններով, գունային երանգներով, պատկերներով, խորհրդանիշերով, տառերով ու թվերով: Քարտեզի որակը կախված է պայմանական նշանների ճիշտ, հաջող ընտրությունից, որի դեպքում քարտեզը ստացվում է գեղեցիկ և ընթեռնելի: